բին ընծաներով։ Վերոյիշեալ դէպքի և խանի զայրոյթի առիթը լինում է մի հայ քահանայ Գիրք դիւղացի, որին խանը շատ սիրելիս է եղել։ Քահանան այրիանալով՝ խնդրում է խանին միջնորդել վիճակի առաջնորդ Յովհան եպիսկոպոսին, որ թոյլ տայ իրան երկրորդ անգամ ամուսնանալ և քահանայական պաշտօն կատարել. խանը պատգամաւոր ուղարկելով՝ միջնորդում է Յովհան եպիսկոպոսին. բայց նա պատասխանում է. «եթէ քահանան կամենում է կրկին ամուսնանալ՝ կարող է, միայն քահանայութիւն անել չի կարող մեր եկեղեցական կանոնաց համաձայն»։ Խանը կրկին պատգամաւորի միջոցաւ պահանջում է թոյլտուութիւն քահանային, որ կրկին ամուսնանայ և մի և նոյն ժամանակ քահանայութիւն անէ։ Յովհան եպիսկոպոսը մերժում է խանի խնդիրը բացարձակապէս։ Խանը զայրանալով՝ հրամայում է եպիսկոպոսին տանել Աղսու քաղաքը և այն տեղ կապելով նորա ոտերը՝ դանակոծ անել[1])։

Խան Պօղոս բէգը առանձին յարգանք է վայելել խանի մօտ, յարգելի է եղել նոյնպէս բէգերի, դաւառական թուրքերի և հայերի մէջ. նոցա՝ որոնք կարիք են ունեցել, ձեռնտու է եղել։ Հանգամանքները փոխվում են. 1818 թ. Մուստաֆա խանը Ֆիթդաղից փախչում գնում է պարսից երկիրը. այդ ժամանակ ռուսաց տէրութեան կարգադրութեամբ Ֆիթդաղից քաղաքը տեղափոխում են Հին Զամախի, ուր հին քաղաք է եղել, որ է այժմեան Զամախին։ Տեղափոխվում է բնակիչների հետ միասին և յիշեալ խան—Պօղոս աղան, որ նոյնպէս սիրելի և յարգելի է լինում ռուսաց գլխաւոր պաշտօնատար աստիճանաւորներին՝ այն է զօրապետ (генералъ) Երմալովին, բարոն Ռոզինին, զօրապետ Ղօլովին, որին մեծ յարգանքով հիւրասիրել է իւր տանը հանդերձ նորա հետ եղած աստիճանաւորներով այն ժամանակ, երբ պատերազմ էր գնում ընդդէմ թշնամեաց՝ լէզգիների։ Իշխան (կնեազ) Վարանցովը առանձնապէս սէր և յարգանք է ունեցել Պօղոս աղայի հետ։

---

[1]) Մեր երջանիկ խեղճ նախնիքը այսպէս դժուարութեամբ են պահպանել եկեղեցւոյ կարգ ու կանոնը. բայց մենք՝ նոցա յաջորդներս և ժառանգերս . . . Աստուած չնորհք տայ ամենիս։ Մ. Ե Ս։